ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐՈՎ

Դիլիջանի նոր եկեղեցին և հոգևոր վերածնունդը

ՆՈՐ ՀՈՒՅՍԵՐԻ ԳԱՐՈՒՆ

2025 թվականի սեպտեմբերին հրապարակված մեր տեղեկագրից ի վեր, անցած 6 ամսվա ընթացքում, գրանցել ենք զգալի առաջընթաց եկեղեցու շինարարության գործում: Աշունն իր տեղը զիջեց ձմռանը, իսկ այժմ արդեն գարուն է. Դիլիջանն իր գեղեցկությունը բացահայտեց յուրաքանչյուր եղանակի հետ: Ստորև ներկայացված լուսանկարները փաստում են եկեղեցու վեհությունն ու զորությունը նույնիսկ այս՝ դեռ անավարտ վիճակում:

Դիլիջանում եկեղեցու հայտնվելը գրավել է բոլորին որպես քաղաքի շարունակվող զարգացման նոր, իմաստալից խորհրդանիշ: Որպես հավատի, տոկունության և խաղաղության անմար հույսի խորհրդանիշ՝ եկեղեցին հատուկ նշանակություն կունենա այս գողտրիկ քաղաքի բնակիչների և ողջ տարածաշրջանի համար:

Այժմ մենք ավարտել ենք արտաքին հիմնական շինարարական աշխատանքները և պատրաստվում ենք պատուհանների տեղադրմանը: Սա նշանավորում է ծրագրի եզրափակիչ փուլի մեկնարկը, ըստ էության ձեռնմուխ ենք լինում աշխատանքների վերջին մեկ երրորդին, որի ընթացքում շենքն աստիճանաբար կենդանություն կառնի նուրբ տարրերի և հատուկ լուծումների շնորհիվ. տարրեր, որոնք ցանկացած կառույց, և հատկապես աղոթատունը, դարձնում են յուրահատուկ:

Բաքվի բանտում Ռուբենի ապօրինի կալանքի ընթացքում նրա հավատն ու հոգևոր ներաշխարհն ուղղորդել են իրեն ավելի շատ խորհելու մարդու կոչման և երկրագնդի վրա ունեցած նրա տեղի մասին:

Ամանորին ընտանիքին ուղարկած նամակում Ռուբենը գրել է հետևյալը.

«Հոգին խաղաղվում է միայն այն ժամանակ, երբ հանգրվանում է գերագույն Ճշմարտության մեջ. Ճշմարտություն, որը թե սկիզբ է, թե ավարտ: Նման խինդ ես ապրում այն գիտակցումից, որ մենք ինքնաբավ չենք, որ մենք երախտագետ և պարտական ենք աշխարհին այնպիսին, ինչպիսին այն կա: Ոչ թե ունես ճշմարտությունների բազմազանություն, այլ գոյություն ունի մեկ Ճշմարտություն, որը պետք է ընդունել. այն, որ մենք պարտական ենք ոչ թե ինքներս մեզ, այլ Աստծուն»:

Ռուբենն իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում բոլորին, ովքեր աջակցել են իրեն և մեր ընտանիքին այս դժվարին ժամանակահատվածում:

Վերոնիկա Զոնաբենդ
Ռուբեն Վարդանյանի կինը

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում մեր նախագծին աջակցած բոլոր բարերարներին: Մենք շնորհակալ ենք ավելի քան 1000 նվիրատուներին Դիլիջանից, Հայաստանի այլ վայրերից և ողջ աշխարհից՝ թե՛ անհատներին, թե՛ կազմակերպություններին, ովքեր իրենց լուման են ներդրել:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկեր «Նոյի զավակներ» (Noah's Children) հիմնադրամին, որն Ամանորի և Սուրբ Ծննդյան նախաշեմին նախաձեռնեց հատուկ արշավ: Հիմնադրամը կրկնապատկեց 2025թ. հոկտեմբերից մինչև 2026թ. հունվարն ընկած չորս ամիսների ընթացքում կատարված բոլոր նվիրատվությունները: Այսպիսով, www.mywayfund.com հարթակի միջոցով կատարված նվիրատվությունները «Նոյի զավակներ»-ի կողմից համալրվելով՝ կազմելով 138 880 ԱՄՆ դոլար:

«Նոյի զավակներ» հիմնադրամը հիմնադրվել է համախոհների կողմից՝ ունենալով մեկ միասնական առաքելություն՝ աջակցել մշակույթին, գիտությանը և ամրապնդել համագործակցությունը զարգացող երկրներում, հատկապես Հայաստանում և աշխարհասփյուռ հայ երիտասարդության շրջանում: Այն Կալիֆոռնիայում գրանցված շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնականում գործունեություն է ծավալում Հայաստանում և ԱՄՆ-ում:

Նախագծին աջակցող նվիրատուների ամբողջական ցանկը հասանելի է մեր հիմնադրամի կայքում:

Արթուր Ամիրխանյան
Շինարարական ծրագրի ղեկավար

🔗 ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻՆ

ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6 550 000 ԱՄՆ դոլար

- Կապիտալ շինարարություն՝ 80%
- Նախագծում և տեխնիկական վերահսկողություն՝ 3%
- Հետազոտություններ և լաբորատոր աշխատանքներ՝ 3%
- Վարչական ծախսեր՝ 5%
- Տարածքի բարեկարգում և ներքին հարդարանք՝ 4%
- Պահուստային ֆոնդ՝ 5%

Ֆինանսավորման պլան

- Ծրագրի նախատեսված ավարտը՝ 2028թ.
- Շինարարությունն իրականացված է 70%-ով
- Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 6 550 000 ԱՄՆ դոլար
- Արված նվիրատվություններ՝ 3 480 000 ԱՄՆ դոլար
- Պակասող գումար 3 070 000 ԱՄՆ դոլար

Հիմնադիր բարերարներ

- Ռուբեն Վարդանյան և Վերոնիկա Զոնաբենդ
- Նուբար և Աննա Աֆեյաններ

ՀԻՄՔԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԵՐՏՎԱԾՔ.
ՄԻԱՍԻՆ ՄԵՆՔ ՀԱՍԵԼ ԵՆՔ ԱՅՍ ՀԱՆԳՐՎԱՆԻՆ

2019

2020

2021

2022

2023

2024

2025

2026



Ձեր բարերարության շնորհիվ վերջին 12 ամիսների ընթացքում հավաքագրվել է 600,000 ԱՄՆ դոլար:

Պակասող **3 070 000 ԱՄՆ դոլարը** հավաքագրելու համար մենք հայցում ենք ձեր շարունակական աջակցությունը՝ այս կենսական նշանակություն ունեցող նախագիծն ավարտին հասցնելու համար: Յուրաքանչյուր նվիրատվություն, անկախ չափից, օգնում է մեզ կառուցել հույսի և խաղաղության այս խորհրդանիշը:

🔗 ՆՎԻՐԱԲԵՐԻՐ